Սամվել Ավետիսյան
ՀՊՏՀ Ամբերդ հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
էլ.հասցե՝ samvelser@gmail.com
Գայանե Թովմասյան
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող,
տնտեսագիտության թեկնածու,
էլ.հասցե՝ tovmasyangayane@yahoo.com
Լուսյա Միրիջանյան
ՀՊՏՀ Նախագծերի կառավարում մասնագիտության մագիստրանտ
էլ.հասցե՝ mirijanyan.lusya@gmail.com
Քրիստինե Թաթոսյան
ՀՊՏՀ Գործարար վարչարարություն մասնագիտության մագիստրանտ
էլ.հասցե՝ gristtatosyan1997@gmail.com
Ինգա Գալուստյան
ՀՊՏՀ Հանրային կառավարում մասնագիտության մագիստրանտ
էլ.հասցե՝ ingagalustyan7@gmail.com
Արգինե Ռուշանյան
ՀՊՏՀ Նախագծերի կառավարում մասնագիտության մագիստրանտ
էլ.հասցե՝ argine.rushanyan@gmail.com

ԱԳՐՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ[1]

Ագրոզբոսաշրջությունը ճանապարհորդությունն է դեպի գյուղական վայրեր, որի նպատակն է հանգստանալ գյուղական միջավայրում, հաղորդակից լինել բնությանը, բուսական և կենդանական աշխարհին: Միաժամանակ, իրենց ցանկութ-

1 Հետազոտությունն իրականացվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներքին շահառուների հետ խորհրդակցությունների արդյունքներով ուսանողների, մագիստրանտների և ասպիրանտների ներգրավմամբ գիտական հետազոտության մրցույթի շրջանակներում շահած «Ագրոզբոսաշրջության զարգացման հնարավորությունների գնահատումը ՀՀ մարզերում (ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի օրինակով) հետազոտական ծրագրի շրջանակներում:

յամբ զբոսաշրջիկները կարող են մասնակցել գյուղատնտեսական, հողի մշակման, բերքահավաքի, և այլ աշխատանքներին: Բացի այդ, ագրոզբոսաշրջությունը գյուղական կյանքի և կենցաղի աշխուժացման և ազգային ավանդույթների, սովորույթների ու խոհանոցի համաշխարհային ճանաչման լավագույն միջոցներից մեկն է: Ագրոզբոսաշրջությունը բնութագրվում է նաև որպես գյուղատնտեսության, գյուղական կյանքի և զբոսաշրջության մի յուրահատուկ համալիր, որի յուրաքանչյուր տարր իր յուրահատուկ դերակատարությունն ունի տվյալ երկրի տնտեսական արդյունքների ապահովման գործում: Ագրոզբոսաշրջության զարգացման միջազգային փորձի վերլուծությունը խիստ կարևոր է, քանի որ այն թույլ է տալիս բացահայտել տարբեր երկրների զարգացման հիմնական քայլերը և դրանք ՀՀ-ում տեղայնացնելու հնարավորությունները: Հոդվածում վերլուծվել է ագրոզբոսաշրջության զարգացման փորձը տարբեր երկրների օրինակով, մասնավորապես՝Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի, Վրաստանի, Ավստրալիայի, և այլն, տարբեր երկրներում այդ ոլորտում գործող ասոցիացիաները և դրանց գործառույթները:

Հիմնաբառեր. ագրոզբոսաշրջություն, զբոսաշրջիկ, գյուղական հանգիստ, գյուղատնտեսություն, ասոցիացիա, օրենք:

Ներածություն

Զբոսաշրջությունն ունի զարգացման հին և հարուստ պատմություն և կապված է մարդկանց՝ տարբեր նպատակներով մի վայրից դեպի մյուսը ճանապարհորդելու հետ: Զբոսաշրջության տեսակներից է ագրոզբոսաշրջությունը, որն էական տեղ ունի զբոսաշրջության համակարգում, քանի որ նպաստում է գյուղական բնակավայրերի զարգացմանը, գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, գյուղացիական տնտեսությունների եկամտի մակարդակի ավելացմանը, աղքատության և գործազրկության մակարդակների նվազմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, համայնքային բյուջեի մուտքերի ավելացմանը:

Ըստ ՄԱԿ-ի տվյալների՝ եթե 1950թ. աշխարհի բնակչության 30%-ն էր բնակվում քաղաքներում (751 մլն մարդ), այսօր՝ 55%-ը (4,2 մլրդ մարդ), ապա 2050թ. 68%-ը կբնակվի քաղաքներում (6,7 մլրդ մարդ), որի շուրջ 90%-ը կլինի Աֆրիկայի և Ասիայի քաղաքներում (World Urbanization Prospects, 2018): ՀՀ-ում 2020թ հուլիսի 1-ի դրությամբ բնակչությունը կազմել է 2963,0 հազ մարդ, որից քաղաքային բնակչությունը կազմել է՝ 1895,8, իսկ գյուղական բնակչությունը՝ 1067,2 հազ մարդ (Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2020թ հուլիսի 1-ի դրությամբ):

Այս առումով, ագրոզբոսաշրջության կայուն զարգացումը հիանալի միջոց է քաղաքներից դեպի գյուղեր մարդկանց հոսք ապահովելու համար, ինչը կնպաստի ֆինանսական միջոցների ներհոսքին դեպի գյուղական բնակավայրեր: Ագրոզբոսաշրջությունը կնպաստի գյուղական համայնքնե-

րի զարգացմանը, զբաղվածության ապահովմանը, արտագաղթի նվազմանը, բնության պահպանմանը, գյուղական համայքների մշակութային արժեքների պահպանմանը, արժևորմանն ու համաշխարհային ճանաչմանը, ենթակառուցվածքների զարգացմանը:

ՀՀ-ն ունի ագրոզբոսաշրջության զարգացման մեծ ներուժ, սակայն, քանի որ զբոսաշրջության այս տեսակը համեմատաբար նոր է և առկա են լուծում պահանջող մի շարք խնդիրներ, միջազգային փորձի ուսումնասիրությունը խիստ կարևորվում է՝ ագրոզբոսաշրջության կառավարման և առավել արդիական զարգացման տեսանկյունից:

Տեսական հիմքեր

Ագրոզբոսաշրջությունը կարելի է բնորոշել որպես ճանապարհորդություն դեպի գյուղական վայրեր, որի նպատակն է մասնակցել գյուղատնտեսական, հողի մշակման, բերքահավաքի, և այլ աշխատանքներին: Ագրոզբոսաշրջությունը միավորում է երկու խոշոր ոլորտներ՝ գյուղատնտեսությունը և զբոսաշրջությունը՝ բացելով նոր, շահութաբեր շուկաներ գյուղատնտեսական ապրանքների և ծառայությունների համար և ապահովելով ճանապարհորդական փորձառություն տարածաշրջանային մեծ շուկայի համար (Wicks, Merrett, 2003):

Ագրոզբոսաշրջությունը կարևոր խթան է գյուղական տարածքների զարգացման համար, քանի որ նպաստում է եկամուտների ավելացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, գործազրկության կրճատմանը, ներդրումների ներգրավմանը, համայնքային կյանքի ակտիվացմանը: Միաժամանակ քաղաքաբնակ զբոսաշրջիկների համար այն լավագույն հնարավորություն է հանգստի կազմակերպման, թարմ և բազմատեսակ սնունդ վայելելու, բնության հետ սերտ շփում ունենալու, տեղի մշակույթին և պատմությանը հաղորդակից լինելու, նոր գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու համար (Агротуризм сегодня):

Հատկապես շահեկան է ընտանեկան զբոսաշրջությունը, քանի որ թեկուզև կարճատև, բայց ամենօրյա շփումը բնության ու գյուղական կենսակերպի հետ հնարավորություն է տալիս ապահովել, յուրացնել մարդու և կենդանի բնության համակեցության կանոնները, գնահատել ու պահպանել շրջակա միջավայրը:

Ներկայումս գիտական գրականության մեջ բազմակողմանիորեն լուսաբանվում են ագրոզբոսաշրջության, կանաչ տնտեսության և բնապահպանական գյուղատնտեսության զարգացման օրինաչափությունները, մեթոդները և հեռանկարները (Privitera, 2010):

Արդյունքներ և քննարկում

Ներկա ժամանակաշրջանում ագրոզբոսաշրջությունը լայն տարածում է ստանում աշխարհի տարբեր երկրներում: Ըստ Լոնդոնի Տեխնովիո հետազոտական և խորհրդատվական ընկերության 2019թ. փետրվարին հրապա-

րական «Համաշխարհային ագրոզբոսաշրջությունը 2019-2023թթ ընթացքում» խորագրով ուսումնասիրության, համաշխարհային ագրոզբոսաշրջության ոլորտում 2019-2023թթ. ընթացքում կանխատեսվում է 18% աճ, որը համարժեք է 56,63 մլրդ ԱՄՆ դոլարի: Կանխատեսվող աճին մեծապես նպաստելու են տեխնոլոգիական առաջընթացը, ինտերնետ հասանելիության ապահովումը գյուղական բնակավայրերում, մարքեթինգային արդյունավետ գործիքակազմի կիրառումը: Հետազոտության համաձայն՝ ոլորտի 30% աճը ապահովելու են Եվրոպական երկրները (Technavio, Global Agritourism Market 2019-2023):

Ներկայումս գյուղական զբոսաշրջությունը համարվում է զբոսաշրջության առավել դինամիկ զարգացող տեսակներից մեկը: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ եվրոպացիների ավելի քան 50%-ը նախընտրում է հանգստանալ գյուղական վայրերում: (Казначеева, Челнокова, Коровина, 2017): Ուստի գնալով մեծանում է գյուղական զբոսաշրջության զարգացմանը նպաստող ազգային ասոցիացիաների դերակատարությունը (Печерица, Шевченко, 2003):

Դիտարկենք առավել հայտնի մի քանի ասոցիացիաների գործունեությունը

- Ֆրանսիայում գործում է Gites de France ասոցիացիան, որը հիմնադրվել է 1954թ.-ին: Այն ստեղծել է գյուղական հյուրատների առաջին եվրոպական ցանցը: Ակտիվորեն աջակցում է գյուղական զբոսաշրջության տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացմանը: Դա իրականացվում է ասոցիացիայի անդամների արդյունավետ շուկայավարումն ապահովելու, առավելապես ամրագրման համակարգի արդյունավետությունը բարձրացնելու միջոցով:
- Իտալիայում գործում է Terra Nostra (www.terranostra.it) ազգային ասոցիացիան, որը միավորում է 18 տարածաշրջանային և 96 ազգային ասոցիացիաներ, նպաստում է գյուղական զբոսաշրջության զարգացմանը առանձնահատուկ տարածաշրջաններում, աջակցում է տեղական նախաձեռնություններին, հրապարակում է ուղեցույցեր, կազմակերպում է անձնակազմի վերապատրաստում, իրականացնում է գյուղական զբոսաշրջություն թեմայով դասընթացներ (Food, Agri-Culture and Tourism...):
- Իսպանիայում գործում է ASETUR-Asociaciyn Espacola de Turismo Rural ասոցիացիան, որը EuroGites-ի անդամ է: Ստեղծվել է 1994 -ին: Միավորում է ամբողջ երկրում տեղակայված գյուղական զբոսաշրջության տարածաշրջանային ֆեդերացիաները: Հրատարակում է ընդհանուր պաշտոնական ուղեցույց գյուղական զբոսաշրջության վերաբերյալ: Բացի այդ, ասոցիացիայի կողմից մշակվել են չափելի գնահատման կառուցակարգեր ագրոզբոսաշրջության հարմարությունները գնահատելու համար (Spanish Associations of Rural Tourism (Asetur)):
- Գերմանիայում գործում է ECEAT Germany (www.eceat.org) ասոցիա-

ցիան, որը մշակում և հրապարակում է այդ երկրում տեղակայված էկոլոգիապես մաքուր ֆերմաների կատալոգը: Հանդիսանում է ECEAT International-ի անդամ:

- Վրաստանի ագրոզբոսաշրջության ասոցիացիան (https://georgia-agritourism.org)_նպատակ ունի ընդլայնել անդամակցության ցանցը՝ պահպանելով յուրաքանչյուր անդամի առավելությունները և ցանցային հաղորդակցությունը, ուսումնասիրել, տարածել և կիրառել ագրոզբոսաշրջության արդյունաբերության մարքեթինգային արդյունավետ գործիքները, շարունակել զարգացնել հարաբերությունները պետական կարգավորող մարմինների, բուհերի, քոլեջների, և այլ գործակալությունների հետ:

Վերը թվարկվածները կազմակերպություններ են, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստում են ագրոզբոսաշրջության զարգացմանն ամբողջ աշխարհում: Այդ առումով հատկանշական է EuroGites-ը՝ գյուղական զբոսաշրջության եվրոպական ասոցիացիան: Իր կազմում ունենալով 31 մասնագիտացված ընկերություն, աշխարհի 28 երկրներում EuroGites-ն առաջարկում է ավելի քան 100.000 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ գյուղական համայնքներում (EUROGITES):

Գյուղական զբոսաշրջության տեսանկյունից զարգացած երկրներ են համարվում Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Լատվիան, և այլն: Այս երկրներում գյուղական զբոսաշրջության զարգացման փորձի հիման վրա ձևավորվել են գյուղական զբոսաշրջության զարգացման առանձնահատուկ մոդելները: Ուստի, հետաքրքիր է թեկուզև համառոտ ուսումնասիրել այդ մոդելներից յուրաքանչյուրը.

Բրիտանական մոդելի (տիպօրինակի) առանձնահատկություններից կարելի է նշել այն, որ այս մոդելի շրջանակներում էապես կարևորվում է զբոսաշրջիկների կացության խնդիրը: Չնայած այն հանգամանքին, որ գյուղական զբոսաշրջությունը համարվում է զբոսաշրջության մատչելի տեսակներից մեկը, բրիտանական մոդելի շրջանակներում պատկերը մի փոքր այլ է: Այստեղ մատչելիությունը բոլոր գյուղերին չի վերաբերում: Այսպես՝ Բրիտանիայի շատ տարածքներ վերածվել են գյուղական VIP-զբոսաշրջության զարգացման կենտրոնների, որտեղ զբոսաշրջությունը հիմնականում հասանելի է առավել ունևոր խավի համար: Այստեղ կարելի է առանձնացնել 2 տիպի լյուքս տեղաբաշխում.

- ամբողջովին վերանորոգված հին կալվածքներում,
- նոր ստեղծված հատուկ հյուրանոցներում և տներում, որոնք կառուցված են տեղի ազգային առանձնահատկություններին և ավանդույթներին համապատասխան:

Այստեղ ֆերմերները զբոսաշրջիկներին սովորեցնում են օրգանական մթերքների պատրաստման հմտություններ, կիսվում են իրենց պատրաստած գյուղմթերքով, և բացահայտում են այն միջավայրը, որտեղ ֆերմերները ամեն օր աշխատում են (Responsible travel):

Ֆրանսիական մոդելը, ի տարբերություն բրիտանականի՝ ավելի բարդ

կառուցվածք ունի: Այստեղ ներկայացված են գյուղական զբոսաշրջության մի շարք այլընտրանքներ: Զբոսաշրջիկների տեղաբաշխման նախապատվությունը տրվում է քոթեջներին և առանձնատներին: Ֆրանսիացիները սնունդը գերադասում են պատրաստել իրենց ձեռքով՝ օգտագործելով էկոլոգիապես մաքուր գյուղական մթերք:

Ֆրանսիացիները գյուղական զբոսաշրջության զարգացման մոդելի հիմքում դնում են էկոլոգիապես մաքուր օդի, ջրի և սննդի ապահովումը: Հենց այդ է պատճառը, որ գյուղական զբոսաշրջության կազմակերպման վայրերը շրջապատված են լինում անտառներով, լճերով, դաշտերով: Նույնիսկ, լավագույն հանգստյան վայրերում առաջնային է համարվում գոլֆի դաշտ ունենալը, որը ֆրանսիացիների սիրելի սպորտաձևերից է: Հատկանշական է նաև այն փաստը, որ Ֆրանսիան զգալի հաջողությունների է հասել գաստրոնոմիական և գինու զբոսաշրջության ասպարեզներում:

Ֆրանսիայում գյուղական զբոսաշրջությանը սկսեցին մեծ ուշադրություն դարձնել միայն 15 տարի առաջ, երբ Ֆրանսիայի մի շարք գյուղական համայնքներում բացվեցին մոտ 35 հազար ֆերմաներ՝ փոքրիկ հյուրատներով: Տեղական իշխանությունները, տեսնելով զբոսաշրջիկների հետաքրքրվածությունը զբոսաշրջության այս տեսակի նկատմամբ, մշակեցին հատուկ ծրագրեր, ըստ որոնց գյուղական համայնքների բնակիչները ստանում էին ֆինանսական աջակցություն իրենց տները բարեկարգելու, միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու համար: Միևնույն ժամանակ, գյուղացիներն էլ իրենց հերթին պարտավորվում էին 10 տարի շարունակ յուրաքանչյուր տարվա ընթացքում նվազագույնը 2 ամիս ընդունել զբոսաշրջիկների: Այսպիսով, տեղական բնակիչների և պետության միջև ձևավորվեց փոխշահավետ համագործակցություն: Այս ծրագիրն ունեցավ անսնախադեպ հաջողություն: Գյուղացիները նույնիսկ վերանորոգեցին իրենց լքված, բավականին հին տները՝ պահպանելով ավանդական արտաքին հարդարանքը: Սկսեցին օգտագործել իրենց հին ամբարները՝ զբոսաշրջիկներ ընդունելու համար: Ներկայումս հանգստի նպատակով գյուղական համայնքներ են ժամանում ոչ միայն տեղի բնակիչները, այլ նաև արտասահմանցի զբոսաշրջիկները:

Արդեն մի քանի տարի է Ֆրանսիայում գործունեություն է ծավալում «Գյուղական շարժում» կազմակերպությունը, որն իր մեջ ներառում է 2700-ից ավելի հյուրանոցային տնտեսություններ, 200.000 անդամներ, 200 կամավորներ և 1000-ից ավել անիմատորներ: Կազմակերպությունը բաղկացած է 2 ֆեդերացիայից՝ «Գյուղական տնային տնտեսությունների ազգային համադաշնություն և գյուղական միությունների ու անիմացիայի զարգացում» (FNFR) և «Գյուղական սպորտի ազգային ֆեդերացիան» (FNSMR): Կազմակերպության հիմնական նպատակն է գյուղական համայնքների զարգացումը, իսկ գործունեության հիմնական ուղղություններն են՝ մշակութային միջոցառումները՝ սոցիալական կապերն ամրապնդելու նպատակով, ինտեգրված զբոսաշրջությունը, հարգանքը բնական և մարդկային ռեսուրսների նկատմամբ, սպորտ բոլորի համար, մասնակցություն գյուղա-

կան համայնքի բնակչության կյանքի զարգացմանը, անհատական և կոլեկտիվ պատասխանատվության զարգացում (Нуриахметова, 2013):

Ֆրանսիայի կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և ոլորտի առևտրային ու հասարակական կազմակերպությունների սերտ համագործակցության շնորհիվ գյուղական զբոսաշրջությունը ծավալվում է և դառնում ավելի եկամտաբեր գործունեության ոլորտ:

Ֆրանսիայի ագրոզբոսաշրջության ոլորտի զարգացումը պայմանավորված է նաև կանանց ակտիվ մասնակցությամբ: Մասնավորապես, զարգանում է *Réseau de Visites de Ferme* (RVF) կազմակերպությունը, որը ձևավորել է կին ֆերմերների ագրոզբոսաշրջության ցանց: Վերջինս գործում է Ֆրանսիայի մի շարք շրջաններում, իրականացնում ագրոզբոսաշրջության առանձնահատկությունների վերաբերյալ ուսուցման և տեղեկատվական ակտիվ գործունեություն (Alexis, Wynne, 2015):

Իտալական մոդելի շրջանակներում մասնագետները առանձնացնում են գյուղական զբոսաշրջության երեք հիմնական ուղղություններ՝

1. բնություն և առողջություն – զբոսաշրջիկների տեղաբաշխում գյուղական վայրերում՝ կուրորտային տարածքներին, ազգային պարկերին մոտ,
2. ավանդական խոհարարություն – զբոսաշրջիկների տեղաբաշխումը գյուղական այնպիսի տներում, որոնք մասնագիտացված են սննդի կամ խմիչքների տեսակներից որևէ մեկի պատրաստման մեջ, այդ թվում՝ գինի, ձիթապտղի յուղ, ձկներ, ծովամթերք և այլն,
3. սպորտ – զբոսաշրջիկների տեղաբաշխումը քեմփինգներում, հանգստյան այնպիսի տներում, որոնք ունեն մարզասրահներ և սպորտով զբաղվելու համար նախատեսված պայմաններ:

Գյուղական զբոսաշրջությունն իր առաջացման սկզբնական շրջանում բավականին մատչելի հանգիստ էր առաջարկում, սակայն որպես հանգստի ոչ ավանդական տարբերակ դեռևս մեծ հեղինակություն չէր վայելում: 1985թ. Իտալիայի օրենսդիր մարմինն այս ոլորտի կարգավորման հիմնարար իրավական նորմեր ընդունեց, որը գյուղական բազմաթիվ լքված շինությունների ու կալվածքների վերաբնակեցման և վերագործարկման հիմքեր ստեղծեց: Կառավարության կողմից արված քայլերն ու ներդրումները խթան հանդիսացան ֆերմերային տնտեսությունների և դրան զուգահեռ ագրոզբոսաշրջության զարգացման համար: Բավական է նշել, որ արդեն իսկ 1995թ գյուղական զբոսաշրջության նպատակով այցելուների թիվն աճեց մոտ 3 անգամ:

Ներկայումս գյուղական վայրերում իրականացվում են ավանդական փառատոններ, հատկապես զարգանում է սպորտային (լեռնագնացություն, ձիավարություն, լող) և առողջարանային տուրիզմը: Մեծ համարում ունեն «գինու ճանապարհ» երթուղիները, որոնց միջոցով զբոսաշրջիկները հնարավորություն են ունենում համտեսել գինիներ և մասնակցել գինիների պատրաստման ողջ գործընթացին (Bakerjian, 2019):

Գերմանական մոդելն ունի գյուղական զբոսաշրջության կազմա-

կերպման յուրահատուկ մշակույթ: Այստեղ ընդունված է զբոսաշրջիկների կացության ապահովումն իրականացնել հենց գյուղացիների տներում: Ի տարբերություն այլ մոդելների՝ գերմանական տարբերակը կարևորում է տեղի գյուղացիների հետ զբոսաշրջիկների անմիջական կապի ապահովումը և գյուղական աշխատանքներում վերջիններիս ներառված լինելը:

Գերմանիան հայտնի է նաև իր փառատոներով և տոնակատարություններով, որոնցից զերծ չեն նաև գյուղերը: Տեղի իշխանությունները գյուղական զբոսաշրջության զարգացման տեսանկյունից առաջնային նշանակություն են տալիս հյուրընկալությանն ու ծառայությունների մատուցման ընդհանուր մակարդակին: Որակի վերահսկողության նպատակով ստեղծվել է պիտակների հատուկ համակարգ, որն օգտագործվում է գյուղական զբոսաշրջության մասնակիցների կողմից կացության և սննդի ծառայությունները գնահատելու համար (Казначеева, Челнокова, Коровина, 2017):

Վրաստանում գործում է Ագրոզբոսաշրջության միավորում, որն իր մշտական գործունեությունն է ծավալում ագրոզբոսաշրջության զարգացման և հնարավորությունների բացահայտման հարցում: Միավորումը համախմբում է ֆերմերներին, հողատերերին, զբոսաշրջային օպերատորներին, կառավարման մարմիններին: Միավորման հիմնական նպատակը ագրոզբոսաշրջության բնագավառում կրթական, զբոսաշրջային և ժամանցի միջոցառումների կազմակերպումն է: Ըստ պաշտոնական տվյալների՝ Վրաստանի ագրոզբոսաշրջությունը տարեկան ապահովում է մոտ 3,2 միլիարդ դոլար եկամուտ (Georgia Department of Agriculture):

Ավստրալիայում 2015-2016թթ. ընթացքում գյուղական բնակավայրեր այցելած ներքին և արտաքին զբոսաշրջիկների քանակը եղել է 1,8 միլիոն՝ աճելով տարեկան մոտավորապես 9%-ով: 2018 թվականի տվյալներով՝ ագրոզբոսաշրջության ոլորտը տարեկան ստեղծում է մոտ 9,4 միլիարդ դոլար: Գինեգործարաններ այցելող զբոսաշրջիկների թիվը կազմում է մոտ 3,7 միլիոն մարդ (Tourism Research Australia):

2010թ Ավստրալիայում 300 ագրոզբոսաշրջային ծառայություններ մատուցող գյուղատնտեսների շրջանակներում իրականացվեց մի հետազոտություն, որից պարզվեց, որ հարցման մասնակիցների 21%-ը եկամտի 90%-ն ստանում են ագրոզբոսաշրջային գործունեությունից: Կանխատեսվում է, որ Ավստրալիայի սննդի արդյունաբերությունը և ագրոբիզնեսը 2030 թվականին կապահովեն մոտավորապես 250 միլիարդ ԱՄՆ դոլարի եկամուտ: 2019 թվականի դրությամբ՝ Ավստրալիայում սննդի արդյունաբերությունը և ագրոբիզնեսը ապահովում են ՀՆԱ-ի մոտավորապես 7,6 %-ը կամ մոտ 138 միլիարդ դրամ: (Why Agritourism is important for Australia, 2019): Ավստրալիայում Ագրոզբոսաշրջության զարգացման համար մեծ կարևորություն են տալիս մարքեթինգային արդյունավետ գործիքակազմի կիրառմանը, կայքերին, սոցիալական մեդիա մարքեթինգի գործիքներին: Բացի այդ, մեծ կարևորություն է տրվում նաև ագրոզբոսաշրջության ոլորտում կրթական մակարդակի բարձրացմանը՝ փորձառության ծրա-

գրերի, խոհարարական դասընթացների, հետազոտությունների միջոցով:

Եզրակացություն

Ամփոփելով կարելի է անել մի շարք հետևություններ և եզրահանգումներ

- տարբեր երկրներում ագրոզբոսաշրջության զարգացման գործում էական նշանակություն ունեն ինչպես ոլորտում գործող ասոցիացիաները, այնպես էլ մասնավոր և պետական նախաձեռնությունները: Տարբեր երկրների ասոցիացիաները, օրինակ, միավորում են ֆերմերների, ագրոզբոսաշրջությամբ զբաղվող այլ սուբյեկտների, իրականացնում են կրթական, մարքեթինգային, զբոսաշրջության և ժամանցի կազմակերպմանն աջակցության և այլ գործառույթներ,
- վերոնշյալ երկրներում գյուղական զբոսաշրջությունը դիտարկվում է ոչ միայն որպես զբոսաշրջության տեսակ, այլ նաև տարածքների զարգացման, գյուղական զբաղվածության ապահովման, մշակութային արժեքների վերարժևորման, եկամուտների ներգրավման գործիք, ուստի հատուկ ջանքեր և միջոցառումներ են իրականացվում՝ այն զարգացնելու ուղղությամբ,
- վերոնշյալ երկրներում ագրոզբոսաշրջիկներին առաջարկվում են գործունեության տարբեր տեսակներ՝ հաշվի առնելով նաև այդ երկրների ռեսուրսային առանձնահատկությունները, ինչպես նաև ագրոզբոսաշրջությունը հիմնականում համատեղում են զբոսաշրջության այլ տեսակների հետ, օրինակ՝ էկո, սպորտային, արկածային, գաստրոնոմիական, պատմամշակութային, առողջարանային, և այլն,
- ագրոզբոսաշրջության զարգացման գործում մեծ նշանակություն ունի նաև օրենսդրական կարգավորումը, որի միջոցով դրվում են ոլորտում գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ օրենսդրական հիմքեր,
- ագրոզբոսաշրջության զարգացման գործում մեծ նշանակություն ունի նաև համապատասխան ծառայությունների որակի վերահսկողության իրականացումը պետության կողմից (օրինակ՝ Գերմանիայում),
- ագրոզբոսաշրջության զարգացման համար էական նշանակություն ունի պետական օժանդակությունը: Օրինակ՝ Ֆրանսիայում, տեղական իշխանությունները մշակել են հատուկ ծրագրեր, ըստ որոնց գյուղական համայնքների բնակիչները ստացել են ֆինանսական աջակցություն իրենց տները բարեկարգելու, միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու համար, ինչն էականորեն նպաստել է ոլորտի զարգացմանը: Իտալիայում, օրինակ, տեղական ինքնակառավարման մարմինները մասնավոր հատվածի հետ համագործակցության արդյունքում նպաստել են իրենց տարածաշրջանների առաջմղմանը՝ մասնակցելով ազգային և միջազգային

զբոսաշրջային տոնավաճառների: Մեկ այլ կարևոր քայլ է հասարակական վայրերի վերականգնումն ու պահպանումը, որոնք կարող են ագրոզբոսաշրջիկների համար զբոսանքի և էքսկուրսիաների համար հարմար լինել,

- միջազգային փորձի վերլուծության արդյունքում բացահայտվել են նաև ագրոզբոսաշրջության զարգացման որոշ խոչընդոտներ և սահմանափակումներ, որոնցից են ենթակառուցվածքների զարգացման ներդրումների պակասը, պետական աջակցության պակասը, բիզնեսին աջակցության և խորհրդատվության հասանելիության պակասը (օրինակ՝ Ավստրալիայում):
- ըստ հետազոտությունների՝ ագրոզբոսաշրջության հետագա աճին նպաստելու է տեխնոլոգիական առաջընթացը, ինտերնետ հասանելիության ապահովումը գյուղական բնակավայրերում, մարքեթինգային արդյունավետ գործիքակազմի կիրառումը:

Հայաստանում ագրոզբոսաշրջության զարգացման համար մեծ նշանակություն ունի միջազգային փորձի վերլուծությունը: Ուստի, ընդհանրական կերպով կարելի է ասել որոշ հետևություններ՝ ՀՀ-ում միջազգային լավագույն փորձի տեղայնացման նպատակով, այն է՝ պետական աջակցություն, օրենսդրական դաշտի ստեղծում, վիճակագրական հաշվառման իրականացում, ագրոզբոսաշրջության զարգացման ռազմավարական ծրագրերի մշակում և իրականացում, մարքեթինգային միջոցառումներ, համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում և արդիականացում, ճանապարհների բարեկարգում, ագրոզբոսաշրջային գործունեություն ծավալողների համար համապատասխան կրթական, բիզնեսի վարման, հյուրընկալության դասընթացների կազմակերպում, զբոսաշրջության այլ տեսակների համադրմամբ հետաքրքիր տուրերի կազմակերպում, ագրոզբոսաշրջային ծառայությունների լայն տեսականու առաջարկում զբոսաշրջիկներին, զբոսաշրջության ոլորտում գործող տարբեր հասարակական միավորումների հետ համագործակցություն, և այլն:

Օգտագործված գրականություն

Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2020թ հուլիսի 1-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետության վիճակագրության կոմիտե, https://www.armstat.am/file/article/nasel_01.07.2020.pdf

Агротуризм сегодня, shorturl.at/eBIZ5

Казначеева С.Н., Челнокова Е.А., Коровина Е.А. (2017) *Агротуризм как одно из перспективных направлений индустрии туризма //* Международный журнал прикладных и фундаментальных исследований. № 3-2. – С. 248-252, https://applied-research.ru/ru/article/view?id=11436

Нуриахметова, А.Ф. (2013). *Гуманитарные научные исследования.* №2, http://human.snauka.ru/2013/02/2341

Печерица Е.В., Шевченко М.И. (2003). *Мировой опыт развития агротуризма,* https://cyberleninka.ru/article/n/mirovoy-opyt-razvitiya-agroturizma

Alexis A., Wynne W. (2015) *"Creating a room of one's own": French farm women, agri-tourism and the pursuit of empowerment. Women's Studies International Forum,* Elsevier, 53, pp.1 – 11. https://hal.archives-ouvertes.fr/hal-01564768/document

Bakerjian, M. (2019) *"Consider an Agriturismo for Your Vacation in Italy",* https://www.tripsavvy.com/what-is-agriturismo-1547534

ECEAT-European Centre for Ecological and AgriculturalTourism, www.eceat.org

EUROGITES – European Federation of Rural Tourism, https://uia.org/s/or/en/1100001214

FNSMR, http://www.fnsmr.org

Food, Agri-Culture and Tourism: Linking Local Gastronomy and Rural Tourism, shorturl.at/wCDST

Georgia Department of Agriculture, Commissioner Gary W. Black, "What is Agritourism?", http://www.agr.georgia.gov/agri-tourism_in_georgia.aspx,

Gites de France, http://www.gites-france.info

Privitera. D. (2010).*The İmportance of Organic Agriculture In Tourism Rural.* In Applied Studies In Agribusıness and Commerce (Abstract), Vol. 4, No.1-2, 59-64 p.

"Why Agritourism is important for Australia?" Regionality PTY LTD, Posted on 30, September, 2019, https://www.regionality.com.au/why-agritourism-is-important-for-australia/

Responsible travel, shorturl.at/cyEKX

Spanish Associations of Rural Tourism (Asetur), shorturl.at/bejHP

Technavio, Global Agritourism Market 2019-2023, London, February 2019, 111 pages shorturl.at/nwxE2

Terra Nostra, www.terranostra.it

Tourism Research Australia, cited in Deloitte Australia, 2018, Fundamentals point to growth for Australia's tourism industry, shorturl.at/cvLOQ

Wicks B. E. & Merrett C. D., (2003), *Illinois Institute for Rural Affairs, Agritourism: An economic opportunity for Illinois,* Rural Research Report, Vol.14, No.9, 1-8p.

World Urbanization Prospects, The 2018 Revision, United Nations, p. 2, https://population.un.org/wup/Publications/Files/WUP2018-KeyFacts.pdf

References

Hayastani Hanrapetutyan mshtakan bnakchutyan tvaqanaky 2020t. hulisi 1-i drutyamb [The number of de jure population of the Republic of Armenia as of July 1, 2020], Hayastani Hanrapetutyan vijakagrutyan komite, https://www.armstat.am/file/article/nasel_01.07.2020.pdf (In Arm.)

Agroturizm segodnya, [Agritourism today], shorturl.at/eBIZ5 (In Rus.)

Kaznacheva S.N., Chelnokova E.A., Korovina E.A., (2017) Agroturizm kak odno iz perspektivnix napravleniy industrii turizma [Agritourism as one of the perspectives of tourism industry] // Mejdunarodniy jurnal prikladnix I fundamentalnix issledowaniy. [International journal of Practical and Fundamental studies] № 3-2. – С. 248-252, https://applied-research.ru/ru/article/view?id=11436 (In Rus.)

Nuriaxmetova A.F. (2013), Gumanitarnie nauchnie issledovaniya [Humanitarian scientific studies]. №2, http://human.snauka.ru/2013/02/2341 (In Rus.)

Pecherica, E.V., Shevchenko, M.I. (2003). Mirovoy opit razvitiya agroturizma [International practice of agritourism development], https://cyberleninka.ru/article/n/mirovoy-opyt-razvitiya-agroturizma (In Rus.)

Alexis. A., Wynne, W. (2015).”Creating a room of one’s own”: French farm women, agritourism and the pursuit of empowerment. Women’s Studies International Forum, Elsevier, 53, pp.1 – 11. https://hal.archives-ouvertes.fr/hal-01564768/document (In Eng.)

Bakerjian M., (2019) “Consider an Agriturismo for Your Vacation in Italy”, https://www.tripsavvy.com/what-is-agriturismo-1547534 (In Eng.)

ECEAT-European Centre for Ecologicaland AgriculturalTourism, www.eceat.org (In Eng.)

EUROGITES – European Federation of Rural Tourism, https://uia.org/s/or/en/1100001214 (In Eng.)

FNSMR, http://www.fnsmr.org (In Eng.)

Food, Agri-Culture and Tourism: Linking Local Gastronomy and Rural Tourism, shorturl.at/wCDST (In Eng.)

Georgia Department of Agriculture, Commissioner Gary W. Black, “What is Agritourism?”, http://www.agr.georgia.gov/agri-tourism_in_georgia.aspx, (In Eng.)

Gites de France, http://www.gites-france.info (In Eng.)

Privitera D., (2010), The İmportance of Organic Agriculture In Tourism Rural, In Applied Studies In Agribusıness and Commerce (Abstract), Vol. 4, No.1-2, 59-64 p. (In Eng.)

“Why Agritourism is important for Australia?” Regionality PTY LTD, Posted on 30, September, 2019, https://www.regionality.com.au/why-agritourism-is-important-for-australia/ (In Eng.)

Responsible travel, shorturl.at/cyEKX (In Eng.)

Spanish Associations of Rural Tourism (Asetur), shorturl.at/bejHP (In Eng.)

Terra Nostra, www.terranostra.it (In Eng.)

Technavio, Global Agritourism Market 2019-2023, London, February 2019, 111 pages shorturl.at/nwxE2 (In Eng.)

Tourism Research Australia, cited in Deloitte Australia, 2018, Fundamentals point to growth for Australia’s tourism industry, shorturl.at/cvLOQ (In Eng.)

Wicks B. E. & Merrett C. D., (2003), Illinois Institute for Rural Affairs, Agritourism: An economic opportunity for Illinois, Rural Research Report, Vol.14, No.9, 1-8p. (In Eng.)

World Urbanization Prospects, The 2018 Revision, United Nations, p. 2, https://population.un.org/wup/Publications/Files/WUP2018-KeyFacts.pdf (In Eng.)

Самвел Аветисян
Старший эксперт исследовательского центра ''АМБЕРД''
Армянского государственного экономического университета ,
доктор экономических наук, профессор
Эл.адрес: samvelser@gmail.com
Гаяне Товмасян
Старший исследователь исследовательского центра ''АМБЕРД''
Армянского государственного экономического университета ,
кандидат экономических наук
Эл.адрес: tovmasyangayane@yahoo.com
Луся Мириджанян
Магистрант управления проектами АГЭУ
Эл.адрес: mirijanyan.lusya@gmail.com
Кристине Татосян
Магистрант делового администрирования АГЭУ
Эл.адрес: qristtatosyan1997@gmail.com
Инга Галустян
Магистрант государственного управления АГЭУ
Эл.адрес: ingagalustyan7@gmail.com
Аргине Рушанян
Магистрант управления проектами АГЭУ
Эл.адрес: argine.rushanyan@gmail.com

АНАЛИЗ МЕЖДУНАРОДНОГО ОПЫТА РАЗВИТИЯ АГРОТУРИЗМА

Агротуризм – это путешествие в сельские районы, целью которого является участие в сельскохозяйственных мероприятиях, возделывании земли, сборе урожая и других мероприятиях. Анализ международного опыта развития агротуризма очень важен, так как позволяет определить основные шаги развития разных стран, возможности их локализации в Республике Армения. В статье анализируются модели развития агротуризма, опыт разных стран, таких как Франция, Италия, Германия, Грузия, Австралия и др., ассоциаций, действующих в этой сфере в разных странах, и их функции. Были обсуждены вопросы развития агротуризма, проанализированы основные шаги в разных странах, а также основные направления их применения в Республике Армения.

Ключевые слова: агротуризм, турист, сельский отдых, сельское хозяйство, ассоциация, право.

Samvel Avetisyan
Senior Expert at ''AMBERD'' Research Center of the Armenian State University of Economics, Doctor of Economics, Professor
Email: samvelser@gmail.com
Gayane Tovmasyan
Senior Researcher at ''AMBERD'' Research Center of the Armenian State University of Economics, Ph.D. in Economics
Email: tovmasyangayane@yahoo.com
Lusya Mirijanyan
MA student of Project Management at ASUE
Email: mirijanyan.lusya@gmail.com
Kristine Tatosyan
MA student of Business administration at ASUE
Email: qristtatosyan1997@gmail.com
Inga Galustyan
MA student of Public Management at ASUE
Email: ingagalustyan7@gmail.com
Argine Rushanyan
MA student of Project Management at ASUE
Email: argine.rushanyan@gmail.com

THE ANALYSIS OF INTERNATIONAL EXPERIENCE OF AGRITOURISM DEVELOPMENT

Agritourism is a journey to rural areas, the purpose of which is to participate in agricultural, land cultivation, harvesting, and other activities. The analysis of the international experience of agritourism development is very important, as it allows identifying the main steps of the development of different countries, the possibilities of their localization in the Republic of Armenia. The article analyzes the models of agritourism development, the experience of different countries, such as France, Italy, Germany, Georgia, Australia, etc., associations operating in this field in different countries, and their functions. The issues and the main steps of agritourism development in different countries, as well as the main directions of their application in the Republic of Armenia were discussed and analyzed.

Key Words: Agritourism, tourist, rural rest, agriculture, association, law.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2020թ. օգոստոսի 28-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման 2020թ. սեպտեմբերի 10-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության 2020թ. հոկտեմբերի 1-ին: